ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնը ներկայիս հաստիքացուցակով ձևավորվել է 22.07.2011 թվականի ՀՀ ոստիկանության պետի թիվ 1871-Ա հրամանով և վերահայտարարվել է 27.06.2013 թվականի 2123 –Ա հրամանով:

Ըստ հատատված հաստիքացուցակի՝ ամբիոնն ունի թվով չորս հաստիք՝ ամբիոնի պետ, դոցենտ, ավագ դասախոս և դասախոս, ինչպես նաև համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդող երեքական դասախոսներ:

Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնում տարբեր ժամանակներում դասավանդել են և դասավանդում են Կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ, իրավապահ այլ մարմինների, արդարադատության նախարարության ներկայացուցիչներ և փաստաբանական պալատի անդամներ:

Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի առարկաները դասավանդվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում (իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար և վճարովի ուսուցման ձևերում, հեռակա ֆակուլտետում,), ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում և վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում:

Ամբիոնն ակտիվ կազմակերպում և մասնակցում է միջբուհական գիտաժողովներին, դատախաղերին՝ առանձին դեպքերում գրանցելով բարձր արդյունքներ:

Ամբիոնը բաղկացած է թվով չորս հաստիքից՝

1. ամբիոնի պետ (թափուր),
2. դոցենտ (1 հաստիք, թափուր),
3. ավագ դասախոս (1 հստիք) **Մերի Մանուկյան** (ՀՀ ոստիկանության փոխգնդապետ: Դասավանդում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնում «Պետության և իրավունքի տեսություն» առարկան:

4. դասախոս (1 հստիք) **Գեղեցիկ Վարդանյան** (ՀՀ ոստիկանության ավագ լեյտենանտ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության ամբիոնում դասավանդում է «Քաղաքացիական դատավարություն» առարկան:

Համատեղման կարգով դասախոս՝

1. Անժելա Տոնոյան (ՀՀ ոստիկանության մայոր: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոսի: Համատեղության կարգով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության ամբիոնում դասավանդում է «ՀՀ ընտանեկան իրավունք», «ՀՀ աշխատանքային և սոց. ապ. իրավունք», «ՀՀ աշխատանքային իրավունք» առարկաները:

2. **Դավիթ Օհանյան** (ՀՀ ոստիկանության կապիտան) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ոստիկանության զորքերի հրամանատարական ֆակուլտետի ընդհանուր և ոստիկանության զորքերի տակտիկական պատրաստականության ամբիոնի դասախոս: Համատեղության կարգով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնում դասավանդում է «Քաղաքացիական իրավունք» առարկան:

3. **Լուսինե Թասալյան** (ՀՀ ոստիկանության ավագ լեյտենանտ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս: Համատեղության կարգով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության ամբիոնում դասավանդում է «Քաղաքացիական իրավունք» և «Քաղաքացիական դատավարություն» առարկաները:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. կրթական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,
2. ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը,
3. ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկների, ուղեցույցերի և գիտաուսումնական այլ նյութերի մշակում և հրատարակումը,

4. ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության և (կամ) պաշտոնական ընդդիմախոսի կարծիքների պատրաստումը,

5. ամբիոնին կից գիտական խմբակի գործունեության կազմակերպումը,

6. կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

Ներկայումս ամբիոնի կողմից դասավանդվում են հետևյալ առարկաները՝

1. «Հռոմեական մասնավոր իրավունք»,
2. «ՀՀ քաղաքացիական իրավունք»,
3. «ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունք»,
4. «ՀՀ ընտանեկան իրավունք»,
5. «ՀՀ աշխատանքային և սոց. ապ. իրավունք»,
6. «ՀՀ աշխատանքային իրավունք»,
7. «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ»,
8. «ՀՀ հողային իրավունք»,
9. «ՀՀ բնապահպանական և հողային իրավունք»,
10. «Քաղաքացիական ծառայության հիմունքներ»,
11. «ՀՀ քաղաքացիական ծառայության օրենսդրություն»:

Ուսումնական աշխատանքներին զուգընթաց ամբիոնի կողմից իրականացված գիտահետազոտական գործունեության արդյունքում ստեղծվել են մասնավոր իրավունքի ոլորտի թվով **50 և ավելի աշխատություններ՝ (40-ից ավելի գիտական հոդվածներ, 4 ուսումնական ձեռնարկ և 1 մենագրություն):**